ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1

ք. Երևան 07-ը հոկտեմբերի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6 322 440 (վեց միլիոն երեք հարյուր քսաներկու հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական **միջոցներ, ապա** վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ **Հայաստանի** Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ, ք. Երևան, Ավան Առինջ 2 մկրշ, 2/10, 39
աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 19300920182600
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01016995
ՀՀ պաշտպանության նախարարության	Տնօրեն
ՆՏԱ գլխավոր վարչության պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Մ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի հանովի (զույգ)

Բաղկացած է դեղնականաչավուն գույնի /վերնաշապիկի երանգի/ վիսկոզային գալունից, կարմիր գույնի երիզով երկայնական 4մմ լայնքով երիզներից, որոնք մշակված են ուսադիրի կողային եզրերից դեպի ներս՝ համապատասխանաբար 1,2սմ հեռավորության վրա: Հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի 0,15-0,2 մմ հաստության պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից, ներքին եզրից ուսադիրի երկարությամբ ամրանում է նույն նյութից ամրացման լեզվակը, որի վերջնամասում, եզրից 5մմ դեպի ներս արվում է կտրվածքով 5 մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Արտաքին տեսքը համաձայն հավելվածի: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ 2 օրինակից արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%: **Հավելված 1**:

2.ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի երկնագույն երիզով հանովի (զույգ)

Բաղկացած է դեղնականաչավուն գույնի /վերնաշապիկի երանգի/ վիսկոզային գալունից, երկայնական 4մմ լայնքով երկնագույն երիզներից, որոնք մշակված են ուսադիրի կողային եզրերից դեպի ներս՝ համապատասխանաբար 1,2սմ հեռավորության վրա: Հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի 0,15-0,2 մմ հաստության պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից, ներքին եզրից ուսադիրի երկարությամբ ամրանում է նույն նյութից ամրացման լեզվակը, որի վերջնամասում, եզրից 5մմ դեպի ներս արվում է կտրվածքով 5 մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2սմ լայնքով կամրջակ, որի միջով անցնում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից ուսադիրի ամրացման լեզվակը: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ 2 օրինակից արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%:

3.ՈՒսադիր՝ ավագ սպական կազմի հանովի ՌՈ (զույգ)

Բաղկացած է սև գույնի վիսկոզային գալունից, կարմիր գույնի, երկայնական 4մմ լայնքով երիզներից, որոնք մշակված են ուսադիրի կողային եզրերից դեպի ներս՝ համապատասխանաբար 1,2սմ հեռավորության վրա:Հակադարձ կողմից ներքին եզրից, ուսադիրի երկարությամբ ամրանում է ամրացման լեզվակը, որի վերջնամասում, եզրից 5մմ դեպի ներս արվում է կտրվածքով 5մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2սմ լայնքով կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ամրացման լեզվակը և կամրջակը պետք է լինեն պատրաստված սև գույնի արհեստական կաշվից: Արտաքին տեսքը համաձայն հավելվածի: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%: **Հավելված 2**:

4.ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի /հանովի/ (զույգ)

Բաղկացած է դեղնականաչավուն գույնի /վերնաշապիկի երանգի/ վիսկոզային գալունից, մեջտեղով ուսադիրի երկարությամբ կարմիր գույնի 4մմ լայնքով երիզից: Հակադարձ կողմը պետք է պատրաստված լինի նույն երանգի 0.15-0.2 մմ հաստության պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից, ներքին եզրից ուսադիրի երկարությամբ ամրանում է նույն նյութից ամրացման լեզվակը, որի վերջնամասում, եզրից 5մմ դեպի ներս արվում է կտրվածքով 5 մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2սմ լայնքով կամրջակ պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Արտաքին տեսքը համաձայն հավելվածի: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%:**Հավելված 1**:

5. ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի երկնագույն երիզով /հանովի/ (զույգ)

Բաղկացած է դեղնականաչավուն գույնի /վերնաշապիկի երանգի/ վիսկոզային գալունից, մեջտեղով ուսադիրի երկարությամբ երկնագույն 4մմ լայնքով երիզից Հակադարձ կողմը պետք է պատրաստված լինի նույն երանգի 0.15-0.2 մմ հաստության պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից, ներքին եզրից ուսադիրի երկարությամբ ամրանում է նույն նյութից ամրացման լեզվակը, որի վերջնամասում, եզրից 5մմ դեպի ներս արվում է կտրվածքով 5 մմ տրամագծով անցք՝ ուսադիրի

ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2սմ լայնքով կամրջակ պոլիվինիլքլորիդե /ՊՎՀ/ թաղանթից, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների **վրա պետք է նշված լինի** տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, **արտադրման ամիսն ու** տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%:

6. <u>ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի հանովի ՌՈ (զույգ)</u>

Բաղկացած է սև գույնի վիսկոզային գալունից, կարմիր գույնի, երկայնական երիզներից: Հակադարձ կողմից ներքին եզրից, ուսադիրի երկարությամբ ամրանում է ամրացման լեզվակը, որի վերջնամասում, եզրից 5մմ դեպի ներս արվում է կտրվածքով 5մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2սմ լայնքով կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ամրացման լեզվակը և կամրջակը պետք է լինեն պատրաստված սև գույնի արհեստական կաշվից: Արտաքին տեսքը համաձայն հավելվածի: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%: **Հավելված 2:**

7.<u>ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի կարովի (զույգ)</u>

Բաղկացած է դեղնականաչավուն գույնի վիսկոզային գալունից, մեջտեղով ուսադիրի երկարությամբ կարմիր 4մմ լայնքով երիզից: Հակադարձ կողմը պետք է պատրաստված լինի դեղնականաչավուն գույնի 0.15-0.2 մմ հաստության պոլիվինիլքլորիդե /ՊՎՀ/ թաղանթից: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%:

8.<u>ՈՒսադիր՝ ենթայասպայական կազմի հանովի ՌՈ (զույգ)</u>

Բաղկացած է սև գույնի վիսկոզային գալունից, եզրերը մշակվածեն կարմիր գույնի երիզներով: Հակադարձ կողմից ներքին եզրից, ուսադիրի երկարությամբ ամրանում է ամրացման լեզվակը, որի վերջնամասում, եզրից 5մմ դեպի ներս արվում է կտրվածքով 5մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2սմ լայնքով կամրջակ, որի միջով անցնում է ուսադիր ,ամրացման լեզվակը: Ամրացման լեզվակը և կամրջակը պետք է լինեն պատրաստված սև գույնի արհեստական կաշվից: Արտաքին տեսքը համաձայն հավելվածի: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ 2 օրինակից՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%: **Հավելված 2:**

9.<u>ՈՒսադիր՝ կուրսանտական կազմի՝ կարովի կապույտ դաշտով (զույգ)</u>

Բաղկացած է կապույտ գույնի դաշտից, եզրերում մշակված են 5-6 մմ լայնության դեղին գույնի երիզներ, երիզների միջև, ուսադիրի ներքևի եզրից դեպի ներս՝ 25 մմ հեռավորության վրա, մեջտեղում ուսադիրի երկարությամբ ասեղնագործված դեղին գույնի թելով 'Կ' տառ: Տառի բարձրությունը՝30մմ, լայնությունը 13մմ, իսկ պատի հաստությունը՝ 4մմ: Հակադարձ կողմը պետք է պատված լինի պաշտպանական գույնի 0,2 մմ հաստության պոլիվինիլքլորիդե /ՊՎՀ/ թաղանթով կամ մշակված 67% պոլիէսթեր և 33% վիսկոզայի բաղադրությամբ ու 180 գրամ մակերեսային խտությամբ պաշտպանական գույնի գործվածքով: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%:

10. <u>ՈՒսադիր՝ կուրսանտական կազմի՝ հանովի, կապույտ դաշտով (զույգ)</u>

Բաղկացած է կապույտ գույնի դաշտից, եզրերում մշակված են 5-6մմ լայնության դեղին գույնի երիզներ, երիզների միջև, ուսադիրի ներքևի եզրից դեպի ներս՝ 25մմ հեռավորության վրա, մեջտեղում ուսադիրի երկարությամբ ասեղնագործված դեղին գույնի թելով "Կ" տառ: Տառի բարձրությունը՝30մմ, լայնությունը 13մմ, իսկ պատի հաստությունը՝ 4մմ: Հակադարձ կողմից ներքին եզրից, ուսադիրի երկարությամբ ամրանում է ամրացման լեզվակը, որի վերջնամասում, եզրից 5մմ դեպի ներս արվում է կտրվածքով 5մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2սմ լայնքով կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ամրացման լեզվակը և կամրջակը պետք է լինեն պատրաստված սև կամ դարչնագույն գույնի արհեստական կաշվից: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ:

Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%:

11. ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի կարովի (զույգ)

Բաղկացած է դեղնականաչավուն գույնի վիսկոզային գալոնից, կարմիր գույնի երիզով երկայնական 4մմ լայնքով երիզներից, **որոնք մշակված են** ուսադիրի կողային եզրերից դեպի ներս՝ համապատասխանաբար 1,2սմ հեռավորության վրա: Հակադարձ կողմը պետք է պատրաստված լինի դեղնականաչավուն գույնի 0.15-0.2 մմ հաստության պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից, իսկ **300 զույգը** կապույտ գույնի թաղանթից: ՈՒսադիրների երկարությունը՝ 12.5սմ և 13.5սմ, իսկ լայնությունը՝5 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12,5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13,5 սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը գործարանային, արկղերով, քանակը մեկ արկղում՝ 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 2%:

12.Թևքանշան ոսկեգույն (հատ)

Արտադրվում է սև թավշյա կտորի վրա հակառակ կողմից ձգվում է հատուկ ձգող կտորաշերտով: Արտաքին չափսերը՝ 7,5սմ տրամագծով շրջանաձև: Թևքանշանի վրա ասեղնագործված է գունավոր ՀՀ ԶՈՒ զինանշանը:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով. արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

13. Թևքանշան ՌԱՀ (հատ)

Ասեղնագործված երկնագույն մահուդե կտորի վրա, դարձերեսին ձգվում է հատուկ ձգող կտորաշերտ: Արտաքին չափսերը՝ 8սմ տրամագծով արհեստական դեղին գույնի թելով ասեղնագործված շրջանակ: Կենտրոնում եռագույն դրոշի ֆոնի վրա արհեստական դեղին գույնի թելով ասեղնագործված բացված պարաշուտ, կենտրոնում երկնագույն արհեստական թելով լցակարված ինքնաթիռի և հրթիռի ուրվագիծ, պարուրված սև գույնի արհեստական թելերով ասեղնագործված շանթապատկերներով: Թևքանշանի արտաքին շրջագծով դեղին գույնի թելերով գրվում է "**ՀՀ ՊՆ ՄԱՐՇԱԼ Ա.ԽԱՆԳԵՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**": Թույլատրելի շեղումը՝± 2%: Արտաքին տեսքը համաձայն հավելվածի: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով՝ մեկ արկղի մեջ մինչև 5000 հատ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

14. Թևքանշան ՌԲՖ-ի (հատ):

Պատրաստվում է մուգ փիրուզագույն թավշյա կտորից, կտորի վրա հակառակ կողմից ձգվում է հատուկ ձգող կտորաշերտով: Պատրաստվում է կլոր 8 սմ տրամագծով: Թևքանշանի կենտրոնում պատկերվում է արծիվ՝ բացված թևերով, թևերը ՀՀ դրոշի գույներով: Արծիվի վրա պատկերվում է բժշկական սիմվոլը: Թևքանշանի վերնամասում գործված է "**ԵՊԲՀ**": Արտաքին շրջագծով գրված է "**ՀՀ ՊՆ ռազմաբժշկական ֆակուլտետ**": Թույլատրելի շեղումը՝± 2%: Արտաքին տեսքը համաձայն հավելվածի: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով՝ մեկ արկղի մեջ մինչև 1000 հատ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

15. Թևքանշան ՀՀ դրոշ (հատ)

Արտադրվում է արհեստական սև թավշյա կտորից, դարձերեսին ձգվում է հատուկ ձգող կտորաշերտ: Թևքանշանը պետք է լինի կլոր՝ 7,5 սմ տրամագծով, արհեստական ոսկեգույն թելով ասեղնագործով շրջանաձև եզրագծված: Ասեղնագործված շրջանակի ներսում ամբողջ մակերեսով համաչափ ասեղնագործվում է գունավոր ՀՀ դրոշը, դրոշի կենտրոնում, կապույտ երանգի վրա ոսկեգույն արհեստական թելով ասեղնագործվում է "**ARMENIA**": Տառի բարձրությունը և լայնությունը 7-8մմ: Տառի պատի լայնությունը 1,8-2,1մմ: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝± 2%: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով՝ մեկ արկղի մեջ մինչև 1000 հատ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

16. Զմեռային դաշտային համազգեստի սերժանտական կոչման տարբերանշան (հատ)

Արտադրվում է ԶՈՒ դաշտային համազգեստի թվային պատկերով գունաքողարկող կտորի վրա,, հանովի օղագոտու տեսքով: Արտաքին չափսերը՝7սմ x 5սմ: Թույլատրելի շեղումը՝± 2%: Վրան սև գույնի արհեստական թելով ասեղնագործված է 120^0 բութանկյուն սերժանտական կոչման անկյունակ, կողմերը՝ 1,5 սմ երկարության (ավագ, ավագ սերժանտ, սերժանտ, կրտսեր սերժանտ, եֆրեյտոր), որոնք ասեղնագործվում են օղագոտու մեջտեղում կողերին զուգահեռաբար, օղագոտու ներքևի եզրի մեջտեղից դեպի տարբերանշանի անկյունը 20 մմ հեռավորության վրա:

Սերժանտական անկյունակները պետք է ասեղնագործվեն հետևյալ կերպ՝

- **ավագ** - 5 մմ և 14մմ լայնությանք 120^0 անկյունակ,1-2մմ հեռավորության վրա- **250 հատ,**
- **ավագ սերժանտ** - 14մմ լայնության 120^0 անկյունակ - **1000 հատ,**
- **սերժանտ** - 3 հատ 5 մմ լայնության 120^0 անկյունակներ, 1-2մմ հեռավորության վրա - **3000 հատ,**
- **կրտսեր սերժանտ** - 2 հատ 5 մմ լայնության 120^0 անկյունակներ, 1-2մմ հեռավորության վրա- **5250 հատ,**

- **Եֆրեյտոր** - 5 մմ լայնության 120⁰ անկյունակ - **500 հատ:**

Արտաքին տեսքը համաձայն հավելվածի: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով՝ մեկ արկղի մեջ մինչև 8000 հատ: Տեսականին տուփերով, մեկ տուփի մեջ՝ 1000 հատ: Արկղերը և տուփերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: **Հավելված 4**:

Ծանոթություն.

Ներկայացված նմուշները պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվում կամ մերժվում են ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ /h	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.11.2020թ.
1	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի հանովի/	զ-գ	2000	408	816000	2000
2	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի երկնագույն երիզով հանովի/	զ-գ	1000	408	408000	1000
3	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ավագ սպական կազմի հանովի ՌՈ /	զ-գ	500	408	204000	500
4	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի հանովի/	զ-գ	2000	408	816000	2000
5	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի երկնագույն երիզով հանովի/	զ-գ	700	408	285600	700
6	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կրտսեր սպայկան կազմի հանովի ՌՈ/	զ-գ	500	408	204000	500
7	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի կարովի/	զ-գ	2000	408	816000	2000
8	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ենթայասպայական կազմի հանովի ՌՈ/	զ-գ	500	408	204000	500
9	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կուրսանտական կազմի կարովի կապույտ դաշտով/	զ-գ	520	576	299520	520
10	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կուրսանտական կազմի հանովի կապույտ դաշտով/	զ-գ	520	576	299520	520
11	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի կարովի/	զ-գ	1000	408	408000	1000
12	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ոսկեգույն/	հատ	10000	88,2	882000	10000
13	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՌԱՀ/	հատ	300	93	27900	300
14	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՌԲՖ/	հատ	300	93	27900	300
15	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՀՀ դրոշ/	հատ	1000	84	84000	1000
16	Տարբերանշաններ /Ձմեռային դաշտային համազգեստի սերժանտական կոչման տարբերանշան/	հատ	10000	54	540000	10000

Ծանոթություն: Ապրանքատեսակները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության միջոցով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԱ 0330614

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝		
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի հանովի/	35811190/1	816000	816000	816000
2	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի երկնագույն երիզով հանովի/	35811190/2	408000	408000	408000
3	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ավագ սպական կազմի հանովի ՌՈ/	35811190/3	204000	204000	204000
4	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի հանովի/	35811190/4	816000	816000	816000
5	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի երկնագույն երիզով հանովի/	35811190/5	285600	285600	285600
6	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կրտսեր սպայկան կազմի հանովի ՌՈ/	35811190/6	204000	204000	204000
7	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կրտսեր սպայական կազմի կարովի/	35811190/7	816000	816000	816000
8	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ենթայասպայական կազմի հանովի ՌՈ/	35811190/9	204000	204000	204000
9	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կուրսանտական կազմի կարովի կապույտ դաշտով/	35811190/10	299520	299520	299520
10	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ կուրսանտական կազմի հանովի կապույտ դաշտով/	35811190/15	299520	299520	299520
11	ՈՒսդիրներ /ՈՒսադիր՝ ավագ սպայական կազմի կարովի/	35811190/16	408000	408000	408000
12	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ոսկեգույն/	35811240/1	882000	882000	882000
13	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՌԱՀ/	35811240/11	27900	27900	27900
14	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՌԲՁ/	35811240/15	27900	27900	27900
15	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՀՀ դրոշ/	35811240/17	84000	84000	84000
16	Տարբերանշաններ /Ձմեռային դաշտային համազգեստի սերժանտական կոչման տարբերանաշան/	39561133/13	540000	540000	540000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

AH 0390614

Հավելված 1

ՈՒՍԱԴԻՐՆԵՐ ՀԱՆՈՎԻ /զույգ/



Ավագ սպայական կազմի

Կրտսեր սպայական կազմի



Ենթասպայական կազմի



Հավելված 2

ՈՒՍԱԴԻՐՆԵՐ ՀԱՆՈՎԻ ՌՈ /գույգ/



Ավագ սպայական կազմի



Կրտսեր սպայական կազմի



Ենթասպայական կազմի

Հավելված 4

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԶՄԱՆ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐ

ՉՄԵՌԱՅԻՆ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ



ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների

ռազմական վարժարանների սաների

ավագների

ավագ սերժանտների

սերժանտների

կրտսեր սերժանտների



եֆրեյտորների

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1

N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն